

Ուղիղ, հատված, ճառագայթ

Ուղիղը ծայրակետեր չունի:

Ուղիղ-չունի ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ:

Օրինակ՝ հորիզոնը

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

a

a ուղիղ

Մենք կարող ենք նշել ուղիղին պատկանող անթիվ կետեր:


Օրինակ՝ A և B կետերը պատկանում են a ուղիղին, իսկ C կետը չի պատկանում են a ուղիղին:



Հատվածը ուղիղի մի մաս է: Այն ունի 2 ծայրակետ:

Հատվածը ունի սկիզբ, ունի վերջ:

Գծապատկերով նշում ենք հատվածն ամբողջությամբ:



AB հատված

• Դրա համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կստանանք A և B ծայրակետերով հատված: Ասում են AB հատված:

• Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, \dots

Ճառագայթը ուղիղի մի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը :

Ճառագայթը ունի սկիզբ, չունի վերջ:

A



A ճառագայթ

Օրինակ՝ արևի ճառագայթը:

Առաջադրանքներ


1. Գծիր որևէ a ուղիղ: Նշիր a ուղիղին պատկանող երեք կետ և դրանք նշանակիր A, B, C տառերով: Նշիր a ուղիղին չպատկանող երեք կետ և դրանք նշանակիր D, E, F տառերով:
2. AC հատվածի երկարությունը 6սմ 7մմ է, BC հատվածինը՝ 8 սմ 4 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը միլիմետրերով :



3. AB հատվածի երկարությունը 27 սմ է, AC հատվածը՝ 8 սմ 4 մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:




4. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե $AD=125$ մմ, $AB=25$ մմ, $BC=55$ մմ:



5. Հաշվիր BC հատվածի երկարությունը, եթե $AD=120$ մմ, $AB=35$ մմ, $CD=52$ մմ:



6. Քանի՞ ճառագայթ կառաջացնեն երկու հատվող ուղիղները:



7. Լրացրու բաց թողնված բառը(բառերը): Ճառագայթ է կոչվում երկրաչափական այն պատկերը, որն ունի սկիզբ, բայց _____ :

8. Լրացրու բաց թողնված բառը(բառերը): Հատվածն ուղղի այն մասն
է, որն ունի _____ :

